


էր, երկուքը արծաթ միտալ, և միւս երկուքը երկաթ, որոնք չորս աշակերտաց վիզը կախուեցան. արծաթի միտալները՝ Ֆրանչիսկոս Յովսէփ կայսեր կարգի ժապաւէնին գոյնով, իսկ երկաթի միտալները Լըկաթեայ թիազի կարգին ժապաւէնին գոյնը ունեցող ժապաւէններով:

— Լնցեալ տմառ երբ Լըրուսաղէմայ շրջակայ քաղաքներն ու գիւղերը կոտորած կ'ընէին մարախները, աղքատ ֆէլլահ կնկան մէկը շատերուն նման ինքն ալ կ'ելլէ դաշտը ու բաւական մարախ ժողվելէն յետոյ՝ կը թողու ծրարը պետինը ու փայտ ժողվելու կ'երթայ. ապա կրկին ետ դառնալով կ'առնու ծրարը ու տունը հասնելով երեկոյեան համար կերակուր կը պատրաստէ սանի մը մէջ զանոնք խաշելով: Իւր տղոց մէկը՝ որ բարեբաղդութեամբ քնացած ըլլալով կերակուրին մասնակից չէր եղած, առտու քընէն արթննալուն մեծ զարմանօք ու սարսափով կը տեսնէ՝ որ տանը մէջ եղող բոլոր անձինք յաւիտենական քունը կը քնանան: Ինչու կը վազէ ու ձայն կու տայ դրացեաց, որոնք կու գան ու քննութիւն ընելով կը տեսնեն որ սանին տակը սոսկալի օձ մի խաշուած կը կենայ. և այսպէս օձը իւր մահուանէն ետքն ալ քանի մի անմեղ մարդոց մահուան ալ պատճառ եղաւ:

— Թամարացի Լպուքահէքուրա անուն վրանաբնակ անձը, որ սակեքանի մի սարի առաջ Լնգղից հիւպատոսի թարգմանին սպանութեանը իբր հեղինակ ճանչցուած էր, անցեալ օր Լյն-Սուլթան ըսուած տեղը սպանուած գանուեցաւ ու ըրիչ մէկ ընկերով մի:

— Սուրբ քաղաքս կազով լուսաւորելու խօսք մի կը պտրտի աւագանեաց մէջ. որ եթէ ստուգուելու ըլլայ, նոր լոյս մի եւս պիտի ստանայ Մարգարէից քաղաքը, որ ճշմարիտ լուսոյն որրանն է:

— Լմայոյ 20 ին հասին ՚ի սուրբ Քաղաքս Լստորից տէրութեան թիկնապահ կոմս Լլֆրէտ Բաար, և կոմս Ֆիլիպ Քանրիաչի երեւելի անձինքը: Հետագայ օրը եկին յուստ գլխադրի սուրբ Յակոբայ, և բանտին Քրիստոսի՝ որ ՚ի սուրբ Հրեշտակապետ. և անտի ելին յայցելութիւն Սրբազան Պատրիարք Հօր, որ արժանաւոր յարգանօք մեծարեց ըզնոցին վսեմութիւնը ՚ի հոյակապ սրբահի Պատրիարքարանիս, որոնք մեծ շնորհակալութեամբ մեկնեցան կրկին տեսութիւն խոստանալով:



ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆԻ
ԵՂԻՇԼԻԻ ՎԱՐԴԱՆՍԻ
ՎԱՍՆ
ՎԱՐԴԱՆԱՅ
ԵՒ
ՀԱՅՈՅ ՊԱՏԵՐԱՊԵՏԻՆ
ՏՊԵԱԼ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅՍ
1865

Լուսին անգամ ՚ի լոյս կ'ընծայուի Սուրբ Լթողոյս տպարանէն, փոքրագիր և երկոտասանաւալ, բաղդատութեամբ հին ձեռագրաց:

ՄԱՄԼՈՅ ՏԱԿ
Սամազիք խոշորագիր: